ՆԷՊ-Ը ԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ն. Ռ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Կոոպերացիան մարդկանց կամավոր միավորում է՝ համատեղ արտադրելու, առևտուր անելու, արտադրանքն իրացնելու և մնացած բոլոր գործերը վարելու համար: Կոոպերացիան կյանքի է կոչվել կապիտալիզմի պայմաններում անընդհատ քայքայվող մանր սեփականատերերին կորստաբեր մրցակցությունից փրկելու և նրանց տնտեսական ինքնուրույնությունը որոշ չափով պաշտպանելու համար:

Կոոպերացիան Անդրկովկաս մուտք գործեց շատ ուշ: Թեև XX-րդ դարի սկզբին Հայաստանը հետամնաց երկիր էր, այն ևս ներքաշվեց համաշխարհային կապիտալիստական զարգացման ոլորտ: Հիմնականում Հայաստանի տարածքից դուրս ձևավորված հայկական առևտրաարդյունաբերական բուրժուազիան և պրոլետարիատն են իրենց ազդեցությունը թողնում մայր հայրենիքի տնտեսական ու քաղաքական զարգացման վրա: Պատահական չէ, որ առաջին կոոպերատիվ ընկերությունների կազմակերպիչները Հայաստանի տարածքից դուրս գտնվող հայազգի գործարար մարդիկ էին, որոնք ձգտում էին մյուս երկրների կոոպերատիվ շինարարության փորձը հասցնել հայ ժողովրդին և դրա օգնությամբ որոշ չափով մեղմացնել նրա վիճակը:

Չնայած երկրում տիրող տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններին՝ 1920 թ. հանրապետության արհեստագործական արտադրության մեջ աշխատում էր 29 հազար մարդ, իսկ արդյունաբերության մեջ՝ 7100 մարդ[1]:

1920թ. վերջերին Հայաստանը խորհրդայնացվեց: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին քայքայված, թուրքական արշավանքների հետևանքով կողոպտված, գաղթականներով ու որբերով հեղեղված նորաստեղծ հանրապետությունը ծանր վիճակի մեջ էր: «Խորհրդային հանրապետություններից ոչ մեկը չի ստացել այնպիսի ժառանգություն, փլուզում, թշվառություն, ինչպիսին ստացել է Խորհրդային Հայաստանը», - գրում էր Լուկաշինը[2]:

Դադարել էին գործելուց Ալավերդու, Կապանի մետաղամշակման գործարանները, թերծանրաբեռնված էին աշխատում բամբակի, կաշվի վերամշակման մի քանի ձեռնարկություններ: Արդյունաբերական արտադրանքը նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ նվազել էր 12 անգամ: Ավերվել էին գյուղերը, կրճատվել էին ցանքատարածությունները: Գյուղապրանքների արտադրությունը կրճատվել էր 3 անգամ[3]: Ամենուր մոլեգնում էր սովն ու համաճարակը:

Խորհրդային կարգերի հաստատումը առաջին հերթին խաղաղություն բերեց երկրին, սակայն կործանարար եղավ կոոպերացիայի համար: Կենսագործվող ռազմական կոմունիզմի քաղաքականության պայմաններում ազգայնացվեցին խոշոր, մանր, միջին ձեռնարկությունները, արգելվեց ձեռներեցությունը, առևտուրը,

---

[1] Տե՛ս ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1, ց.18, գ. 141, թ. 81:

[2] «Խորհրդային Հայաստանի 5 տարին», Եր., 1926, էջ 12:

[3] Տե՛ս **Գ. Գեղամյան,** ՆԷՊ-ը և սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում, Եր., 1957, էջ 64:

պետականացվեց կոոպերատիվների ողջ սեփականությունը: Կոոպերատիվները կցվեցին պարենժողկոմատին, նրանց վրա դրվեց պետության կողմից հատկացվող մթերքների բաշխման պարտականությունը: Դառնալով մթերաբաշխ ապարատ՝ այն, փաստորեն, վերածվեց պետական ապարատի կցուրդի: Սակայն շուտով պարենժողկոմատը լուծարեց կոոպերացիայի վարչությունը, թեև չուներ այդ իրավունքը: Լուծարվեցին Ալավերդու, Լոռու, Նոր Բայազետի, Դիլիջանի կոոպերատիվ միությունները[4]:

Քաղաքացիական կռիվներից հետո բոլշևիկները համոզվեցին, որ համաշխարհային հեղափոխություն այլևս չի լինելու, և իրենք հարկադրված են միայնակ կառուցելու նոր հասարակարգ: Ուստի անհրաժեշտ էր փոխել տնտեսական քաղաքականությունը: 1921 թ. գարնանը հրավիրվեց կոմունիստական կուսակցության 10-րդ համագումարը, որը վերացրեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը և մտցրեց նոր տնտեսական քաղաքականություն:

Նախատեսվում էր խրախուսել մանր ու միջին սեփականատերերին, ծավալել ապրանքադրամային հարաբերություններ: Նախկին տերերին վերադարձվեցին բռնագրավված ձեռնարկությունները, թույլատրվեց անհատական լայն գործունեություն ծավալել, հատկապես խրախուսվեց առևտուրը: «Այսպիսով վերացվում են բոլոր տիպի պարենային բռնագրավումները, - գրված է 1921 թ. ապրիլի 16-ի դեկրետում, - կայուն գները շուկայում, բոլոր գնումները կատարել ազատ գներով»[5]: Դա, փաստորեն, կտրուկ շրջադարձ էր խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության մեջ, որով մշակվում էր անցման շրջանի ծրագիր: Եթե նախկինում գյուղացիների տնտեսական գործունեությունը ենթակա էր պետական անմիջական վերահսկողության, ապա ՆԷՊ-ի իրականացմամբ հնարավորություն է տրվում գյուղացուն պլանավորելու իր արտադրանքը և պետական տուրքը մուծելուց հետո ազատ տնօրինելու իր եկամուտները:

Դրանով իսկ հարկադրանքի նախկին գործելաոճը փոխարինվում է տնտեսական համոզման մեթոդով: Այդ ծրագրում մեծ տեղ էր հատկացվում կոոպերացիայի զարգացմանը, որը Հայաստանում վերածնունդ ապրեց ՆԷՊ-ին անցնելուց հետո: Փաստորեն, 1921 թ., երբ երկրի տնտեսական զարգացման հիմքում դրվեցին ապրանքադրամային հարաբերությունները, և խրախուսվեցին սեփականության բոլոր ձևերը, նոր հորիզոններ բացվեցին կոոպերացիայի զարգացման համար: Պետության բազմակողմանի օժանդակությամբ կոոպերացիան դարձավ լծակ ավերված տնտեսության վերականգնման համար: Հատկապես Հայաստանի սակավահողության պայմաններում անգնահատելի էր կոոպերացիայի դերը բնակչության զբաղվածության բարձրացման և արտագաղթը մեղմացնելու գործում: Այն կարևոր նշանակություն ունեցավ նաև ազգապահպանման և ազգային վերածննդի գործում:

Խորհրդային Հայաստանը առաջին հանրապետությունից, ի թիվս այլ արժեքների, ժառանգեց նաև կոոպերացիայի բնագավառում ունեցած որոշակի փորձը: Կոոպերացիայի առավելությունները տեղական պայմաններին համապատասխան օգտագործելու նախկին փորձը բնակչության որոշ մասին համախմբեց կոոպերացիայի տարբեր ձևերի մեջ:

Զրկված արտադրության և գոյության միջոցներից՝ սակավահող հայ գյուղացին և հատկապես բազմահազար գաղթականությունը հանձին կոոպերացիայի գտան այն օղակը, որը կարող էր իրենց դուրս բերել ճգնաժամից: Այսպիսով,

---

[4] Տե՛ս «Հայաստանի հեղկոմի դեկրետների և հրամանների ժողովածու», 1921, էջ 64:

[5] Նույն տեղում, էջ 22:

կոոպերացիան, միավորելով մանր արտադրողներին, ավելի արդյունավետ էր դարձնում նրանց գործունեությունը:

Հանրապետության բնակլիմայական պայմանների բազմազանության և ազգաբնակչության՝ որոշակի մասնագիտական ավանդույթների շնորհիվ տարածքային գոտիներ էին ձևավորվել արտադրության այս կամ այն ճյուղի զարգացման համար: Այսպես, տարբեր շրջաններում գյուղատնտեսական կոոպերացիայի որևէ ձևի արմատավորումից բացի (այգեգործական, անասնապահական, մեղվաբուծական, պահածոների արտադրության և այլն), լայն հնարավորություններ կային նաև արհեստագործական կոոպերացիայի զարգացման համար (բրուտագործություն, մետաղամշակություն, փայտագործություն և այլն): Այդ պայմանները զգալիորեն հեշտացրեցին կոոպերացիայի ձևավորումն ու զարգացումը: Գյուղատնտեսական կոոպերացիայի տարբեր ձևերի հետ մեկտեղ, որը տվյալ շրջանում առաջնահերթ նշանակություն ուներ, սկսեց արդյունավետ գործել նաև արհեստակցական կոոպերացիան:

Արդյունաբերական թույլ զարգացածության հետևանքով ամենուր զգացվում էր արդյունաբերական արտադրանքի կարիք: Բացի դրանից՝ գյուղատնտեսական աշխատանքների սեզոնային բնույթը գյուղացուն հարկադրում էր տարվա ընթացքում զբաղվել տվյալ վայրում առավել տարածված արհեստներով:

1924 թ. տվյալներով Հայաստանում գործել է արհեստագործական 846 արհեստանոց, որից 594-ը գյուղական վայրերում, որտեղ աշխատում էին 1070 մարդ, որոնք բավարարում էին ազգաբնակչության հիմնական կարիքները[6]: «Որքան որ մեզ մոտ դեռ չկան կատարելագործված և բարդ տեխնիկայով զինված գործարաններ, - գրում է «Խորհրդային Հայաստանը», - որը երկար ժամանակ չի լինելու, անհրաժեշտ է տնայնագործական արդյունաբերության հետ հաշտվել և աջակցել նրա զարգացմանը»[7]:

Վերջին հաշվով արհեստագործության զարգացումը և նրան ցույց տրվող պետական օժանդակությունը խոշոր արդյունաբերության զարգացման նախապայմաններից էր:

Այսպիսով, 20-ական թվականներին կոոպերացիան կարողացավ համախմբել քաղաքի և գյուղի մանր արտադրողներին և զգալիորեն բարելավել մարդկանց սոցիալական վիճակը:

ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի 1921թ. ապրիլի 12-ի դեկրետով կոոպերացիան անջատվեց պարենժողկոմատից և սկսեց ինքնուրույն գործունեություն ծավալել: Աստիճանաբար կոոպերացիաները միավորվում են սպառկոոպերացիաների մեջ և դրվում են պարենժողկոմատի տրամադրության տակ: 1921թ. գարնանը Երևանում կազմակերպվեց առաջին գյուղատնտեսական «Այգեստան» կոոպերատիվը, որն իր ճյուղերը բացեց Էջմիածնում, Աշտարակում և Ղամարլուում:

1923-ից սկսած՝ կոոպերատիվների գործը հանձնվեց Հայկոոպին, որին պետությունը մեծ օգնություն էր ցույց տալիս՝ տրամադրելով շենքեր, վարկեր, հումք, փոխադրական միջոցներ և այլն: Հայկոոպը իր բաժանմունքները բացեց բոլոր գավառներում, վերականգնեց և ամրապնդեց տեղական կազմակերպությունները:

Գյուղացիական կոոպերացման գործում որոշակի աշխուժություն նկատվեց, երբ հիմնվեց Հայգյուղկոոպը: 1924 թ. ՀԽՍՀ Կենտգործկոմի որոշմամբ գյուղացիական կոոպերացիան առանձնանում է սպառկոոպերացիայից: «Գյուղկոոպերացիայի զարգացումը համարելով երկրի գյուղատնտեսության զարգացման հիմքը, -

[6] Տե՛ս ՀՀ ազգային արխիվ, ֆ. 168, ց. 19, գ. 1, թ. 8:

[7] «Խորհրդային Հայաստան», 2 հունվարի 1925:

գրված է Կենտգործկոմի 1924 թ. օգոստոսի 30-ի դեկրետում, - Հայկական ԽՍՀ սահմաններում գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր քաղաքացիներին թույլատրել կազմել կոոպերատիվ միություններ»[8]:

Ինքնուրույնության անցնելուց հետո Հայգյուղկոոպը դարձավ գյուղացիական հարցերով զբաղվող միակ կազմակերպությունը:

Անհատական գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի մեջ ընդգրկելը հեշտացնելու և նրանց շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով այդ շրջանում կոոպերատիվները գյուղերում կազմակերպվում էին ըստ արտադրության ճյուղերի (կաթնարտադրություն, այգեգործություն, մեքենաների օգտագործում և այլն)[9]: Դա ավելի մատչելի էր գյուղացու համար և նպաստում էր տվյալ ճյուղի զարգացմանը:

Եթե 1924 թ. գյուղական կոոպերացիաներում ընդգրկված էր գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվածների ընդամենը 5,9 տոկոսը, ապա 1928 թ.՝ 38,8 տոկոսը[10]:

Սեղմ ժամկետում հանրապետության բոլոր գավառներում տարածվեցին Հայկոոպի, Հայգյուղկոոպի արհեստագործական կոոպերատիվ կազմակերպությունները, ձեռնարկությունները, որոնք կարևոր դեր կատարեցին քայքայված տնտեսության վերականգնման գործում:

Կոոպերացիան դարձավ այն կապող օղակը, որը իր վրա վերցրեց առևտրի և սպասարկման, բնակչության զբաղվածության բարձրացման, մթերքների և կենցաղային ապրանքների արտադրության դժվարին խնդիրների լուծումը:

Հայաստանում ՆԷՊ-ի կայացումն իրականանում էր առանձնահատուկ պայմաններում: Հայաստանը գյուղատնտեսական աղքատ երկիր էր, որտեղ հողի ազգայնացումը չլուծեց ագրարային հարցը: Գյուղացիության զգալի մասը, հատկապես գաղթականությունը, մնաց անհող և շարունակում էր տառապել համատարած աղքատությունից: Հայաստանի 6 գավառներում 1924 թ. 102 հազար գաղթականներից 38 հազարը հողազուրկ էր:

Նոր հողատարածությունների յուրացման և գյուղացիության կարիքները մեղմացնելու հիմնական ուղին ջրանցքաշինության ծավալումն էր: ՆԷՊ-ին անցնելուց հետո որոշ աշխատանքներ կատարվեցին այդ ուղղությամբ: 1921թ. վերականգնվեցին անգործության մատնված 18 ջրանցք և առու: Նրանց ջրատարողությունը ավելացավ 60-70%: Նոր յուրացված հողերը առաջին հերթին տրամադրվում էին հողազուրկ գյուղացիներին: Գյուղացիությանը ավելի էին ոգևորում պետության կողմից խրախուսվող միջոցառումները՝ ուղղված ցանքատարածությունների ընդարձակմանը, բերքատվության բարձրացմանը, անասունների գլխաքանակի ավելացմանը: «Կիրառելով նոր տնտեսական քաղաքականությունը, - գրված է Նոր Բայազետի աշխատավորների համագումարի բանաձևում, - լիահույս ենք, որ Հայաստանի աշխատավորությունը պետք է վերակառուցի յուր ավերված երկիրը, մոռացության տա բոլոր տառապանքները»[11]:

Երբ մշակվում էին ՆԷՊ-ի հիմնական սկզբունքները, ԽՍՀՄ-ը դեռ չէր ձևավորվել: Սակայն Խորհրդային հանրապետությունները, հաշվի առնելով ՆԷՊ-ի պահանջները, մշակեցին իրենց քաղաքականությունը:

---

[8] «Հայգյուղկոոպերացիայի հաշվետվություն», Եր., 1928, էջ 9:

[9] Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 128, ց. 7, գ. 191, թ. 1:

[10] Տե՛ս **Գ. Գեղամյան,** Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին, Եր., 1978, էջ 104:

[11] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 18, թ. 5:

Վերացնելով մանր ու միջին արտադրողների նկատմամբ իրականացված ունեզրկման քաղաքականությունը՝ նրանց վերադարձվեցին նախկինում բռնագրավված ձեռնարկությունները, թույլատրեցին բացել նորերը:

ՆԷՊ-ի պահանջներին համապատասխան՝ բնակչության ձեռներեցությունը խրախուսելու նպատակով մեծ տեղ հատկացվեց առևտրի ծավալմանը՝ այն դիտելով ավերված տնտեսությունը վերականգնելու և արդյունավետ վարելու հիմնական միջոց: Հիմնական ուշադրությունը կենտրոնացվեց կոոպերատիվ և պետական առևտրի վրա, իսկ մասնավոր առևտուրը թույլատրվում, բայց չէր խրախուսվում: ՆԷՊ-ի պայմաններում աշխուժացող մասնավոր առևտրականների դեմ պայքարելու նպատակով հանրախանութներ բացվեցին բոլոր գավառներում: 1922թ. Երևանում գործող մի քանի հանրախանութներ միավորվեցին Հայպետառի մեջ, որը, սակայն, չէր կարողանում լայն գործունեություն ծավալել:

Այս պայմաններում հատուկ ուշադրություն դարձվեց կոոպերատիվ առևտրի վրա, որը միակ գործոնն էր, որ կարող էր միավորել քաղաքի մանր արտադրողներին, նպաստել նրանց առևտրական ու արտադրական գործունեության ծավալմանը: 1921թ. Հայկոոպը, որի մեջ միավորված էին նաև վարկային և գյուղատնտեսական կոոպերացիաները, առանձնացվեց պարենժողկոմատից: Հեղկոմի՝ 1921թ. նոյեմբերի 24-ի դեկրետով պահանջվում էր ստեղծել միասնական կոոպերատիվներ, և պետական բոլոր ձեռնարկություններին պարտադրվում էր հիմնական պատվերները, ինչպես նաև հումքի մատակարարման և վարկավորման պայմանագրերը առաջին հերթին կնքել միասկոոպների հետ[12]:

Սակայն ՆԷՊ-ի կենսագործմանը ուղղված ապրանքադրամային հարաբերություններին խոչընդոտում էին երկրի տնտեսական իրավիճակը, դրամական անկայուն համակարգը: Չվստահելով օրեցօր քայքայվող դրամանիշերին՝ բնակչությունը հաճախ գերադասում էր պարզ ապրանքափոխանակությունը:

Խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին շրջանառության մեջ էին ՌԽՖՍՀ դրամը, հայկական չեկերը, հայկական խորհրդային դրամը, «լոնդոնյան փողերը» և այլ տարադրամներ: Դա, անշուշտ, բացասաբար էր անդրադառնում ապրանքաշրջանառության զարգացման վրա: 1921 թ. շրջանառությունից հանվեցին հայկական չեկերը, «լոնդոնյան փողերը»: Հետագայում աստիճանաբար անցում կատարվեց ԽՍՀՄ միասնական դրամին՝ ռուբլուն: Դա զգալիորեն նպաստեց առևտրաշուկայական հարաբերությունների զարգացմանը:

Հանրապետությունում ամրապնդվող կոոպերատիվ կազմակերպությունները, առևտրից բացի, սկսեցին զբաղվել նաև արտադրական գործունեությամբ: Այդ ժամանակ կոոպերացիայի համակարգում մի քանի տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ կային, որտեղ շուրջ 50 հազար մարդ էր աշխատում: 1926-1927թթ. կոոպերացիայի իրավասության տակ գործում էր 58 պանրագործական (88 բանվոր), Երևանի և Մեղրու պահածոների գործարանները (90 բանվոր), 7 օղու գործարան (96 բանվոր) և Ղափանի մետաքսագործարանը (102 բանվոր)[13]: Բնակչության զբաղվածությունից բացի, այդ ձեռնարկությունները ինչ-որ չափով լրացնում էին արդյունաբերական ապրանքների պահանջարկը:

Սակայն հետագայում արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ աստիճանաբար նվազեց կոոպերացիայի արտադրական գործունեության նշանակությունը: Դա պետության կողմից կոոպերացիայի նկատմամբ վարած սխալ քաղաքականության հետևանք էր:

---

[12] Տե՛ս «Սպառողական կոոպերացիայի ծագումն ու զարգացումը Հայաստանում», Եր., 1952, էջ 118:

[13] Տե՛ս «ՀԽՍՀ կառավարության հրամաններ և որոշումներ», Եր., 1929, էջ 18:

Կոոպերացիան մանր ու միջին արտադրողների կյանքում ոչ միայն տնտեսական վերափոխման, այլև հոգեբանական վերադաստիարակման կարևոր դպրոց էր: Մտնելով կոոպերացիայի մեջ և կատարելով բոլորի համար սահմանված որոշակի պարտականություններ՝ մանր արտադրողը, արհեստավորը, գյուղացին աստիճանաբար ձերբազատվում էին նեղ, եսասիրական հոգեբանությունից և համատեղ աշխատանքի ընթացքում վերափոխվում որպես արտադրող: 1920-ական թվականների Հայաստանի տնտեսության քայքայվածության և մանր անհատական արտադրության ամրապնդման պատճառով կոոպերացիայում ընդգրկված գյուղացիական տնտեսությունները դարձել էին բնակչության հիմնական պահանջմունքների բավարարողներ: Սակայն կոոպերացիայի բնականոն զարգացումը զոհաբերվեց քաղաքական փորձություններին, և իշխանությունները գյուղացիներին պարտադրեցին մտնել կոլտնտեսությունների մեջ: Դաժան բռնություններով իրականացվող կոլեկտիվացումը հանցագործություն էր ամրապնդվող գյուղացիական տնտեսությունների նկատմամբ:

Այսպիսով, կոոպերացիան իր տարբեր ձևերով մեծ զարգացում ապրեց ՆԷՊ-ի կենսագործման պայմաններում, երբ խրախուսվում էին մասնավոր ձեռներեցությունն ու ապրանքադրամային հարաբերությունները:

Գյուղատնտեսության, արհեստագործության, առևտրի ոլորտներում լայնորեն արմատավորվելով՝ կոոպերացիան կարևոր դեր խաղաց ժողովրդական տնտեսության վերականգնման և բնակչության սոցիալական պայմանների բարելավման գործում:

Н. Р. СТЕПАНЯН — ***НЭП и развитие кооперации в Армении.*** — В статье рассматриваются ранее не исследованные вопросы. С обращением к новообнаруженным документам впервые представлены сложившиеся в годы Новой экономической политики различные формы кооперации и их роль в деле развития народного хозяйства.